


ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՎՅԱԶՄԻՍ.
Ն. ՄԱՌԻ ԱՆՈՎԱՆ ԼԵՋՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑ

Բ. Բ. ՊԻՈՏՐՈՎՍԿԻ

Ն. ՅԱ. ՄԱՌԻ ՈՒՍԱՈՒՆՔԸ ՍԵՄԱՆՏԻԿԱՅԻ
ՄԱՍԻՆ ԵՎ ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ
ՊԻԿՏՈԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջնահատիկ «Աշխատությունների ժողովածույի»
առաջին հատորի»



Ն. ՅԱ. ՄԱՌԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՍԵՄԱՆՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԻՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵԿՏՈԴՐԱՑԻԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի սեմանտիկան և հնէաբանությունը հաբեթական լեզվադիտության հիմնական բաժիններն են:

Սեմանտիկան, այսինքն՝ բառերի նշանակության վերաբերյալ ուսմունքը, Ն. Յա. Մառի աշխատություններում ստացել է նոր բովանդակություն, որն ըստ էության դուրս է բերում այդ ուսմունքը զուտ լեզվաբանական պրպտումների ոլորտից:

Սեմանտիկայի հարցերը հաբեթաբանությունը քննության է առնում ըստ ստանդիալ զարգացման տարբեր աստիճանների, սերտորեն կապակցելով սոցիալ-տնտեսական կյանքի հետ: Խոսելով լեզվաբանական բնագավառի աշխատանքի մասին՝ Ն. Յա. Մառը ընդգծում էր, որ անհրաժեշտ է ուսումնասիրել «ոչ միայն ձևը, այլև բովանդակությունը, որը պետք է կապակցված լինի թե նյութական կոլտուրայի և հասարակայնության և թե աշխարհայացքների պատմության հետ»,¹ մատնանշելով, որ լեզվաբանը բառերի «արմատներում» պետք է բացահայտի սոցիալական էրևույթները:

Սեմանտիկայի հարցերը հաբեթաբանությունը քննության է առնում մտածողության զարգացման հետ սերտորեն կապակցված: «Լեզվաբանի հեռացումը մտածողության վերաբերյալ դատողությունից, — գրում էր Ն. Յա. Մառը, — այդ եվրոպական բուրժուական լեզվաբանության ժառանգությունն է... Լեզվի վերաբերյալ հին ուսմունքը ճիշտ էր վարվում, երբ հրաժարվում էր մտածողությունից, որպես իր ձեռնահասության առարկայից, քանի որ նա լեզուն ուսումնասիրում էր առանց մտածողության... բառերի

¹ Н. Я. Марр, Лингвистически намечаемые эпохи развития человечества и их увязка с историей материальной культуры. Избранные работы, т. III, стр. 39.

նշանակությունները ոչ մի իդեոլոգիական հիմնավորում չէին ստանում»¹

Սեմանտիկայի հարցերը հաբեթաբանությունը դիտում է որպես խիստ օրինաչափություններ: Բառերի նշանակության փոփոխումն ու զարգացումը մի պրոցես է, որն ունի իր սեփական օրենքը և, ինչպես շեշտում էր Ն. Յա. Մառը, «սեմանտիկան, նշանակությունը, բոլոր ժողովուրդների մոտ ընդհանուր է»² դրանով իսկ ենթադրելով համեմատական սեմանտիկայի, որպես լեզվաբանության մի հատուկ բաժնի, գոյություն հնարավորությունը:

Սեմանտիկական փոփոխությունների հիմքում ընկած է պատկերացումների դիֆերենցիացիան և բառերի ճշգրտման պահանջը՝ սոցիալ-տնտեսական կյանքի բարդացման կապակցությամբ: Բայց այդ սեմանտիկական փոփոխությունները տեղի են ունեցել ոչ թե պատահական գյուտի միջոցով, այլ արդեն գոյություն ունեցող նյութի օրինաչափ զարգացման ճանապարհով: Բառերի հին նշանակությունները լեզվի մեջ ոչ թե չքացել են անհետ, այլ շարունակել են ապրել: Այս բանը ունեցել է այն հետևանքը, որ լեզվի մեջ պահպանվել են նրա կյանքի զանազան էպոխաների նըստվածքները, որոնք կարող են զատվել գիտական պրատումների միջոցով՝ հաշվի առնելով այն դրույթը, որ լեզուն պատմության ուսումնասիրության աղբյուրներից մեկն է:

Լեզվական նյութին այսպիսի մոտեցում ցուցաբերելու դեպքում հատուկ նշանակություն է ստանում «լեզվի հնէաբանությունը, որը բացահայտում է տարբեր աստիճանների նստվածքները... բառակազմության առանձնահատուկ նորմաներով՝ դրանցից յուրաքանչյուրի համար»³:

Լեզվի հնէաբանական վերլուծությունը չի կարող պարփակվել զուտ լեզվաբանական ուսումնասիրությունների շրջանակների մեջ, քանի որ նա հիմնված է լեզվական զարգացման որոշ ստադիաների հիմնական գծերի և երևույթների կոմպլեքսի դրսևորման վրա, ստադիաներ, որոնք որոշվում են հասարակության զարգացման պատմության համապատասխան ստադիաներով:

Այս ուղղությամբ, այսինքն՝ ստադիականության ուսումնասիր-

¹ Н. Я. Марр, Язык и мышление, ИР, III, стр. 103.

² Н. Я. Марр, К вопросу о первобытном мышлении в связи с языком, ИР, III стр. 81.

³ Н. Я. Марр, Актуальные проблемы и очередные задачи яфетической теории (1928), ИР, III, стр. 56—66.

րության ուղղությամբ աշխատանքը դեռ նոր էր սկսվել, միայն նշվել են այն ուղիները, որոնցով պետք է ընթանալ, և այն պրոբլեմները, որոնք պետք էր լուծել: Այս մասին Ն. Յա. Մառը գրել է. «Այժմ մեր առաջ դրված է ստադիալ զարգացման հարցը: Երբ այդ ստադիալ զարգացումը վերջնականապես կըպարզվի— ոչ այն իմաստով, ինչպես հիմա էլ սխեմատիկորեն ուսումնասիրում ենք այդ հարցն ընդհանուր չդիֆերենցված գծերով, այլ այն իմաստով, թե իրոք ի՞նչ է ներկայացնում կոնկրետ կերպով յուրաքանչյուր ստադիական զարգացում,— այն ժամանակ որակապես կսահմանվի, թե ո՞ր էտապներում, ի՞նչ հիմունքներով և ինչ պայմաններում են մշակվել հնչյունային լեզվի առաջին և հաջորդ շերտերը և համապատասխան շերտանստման հաջորդականությունը: Այն ժամանակ պատմաբանները, իհարկե, կկարողանան այդ բոլորն օգտագործել»¹

Այս ասել է Ն. Յա. Մառը 1929 թվին Մոսկվայում գումարված պատմագետ-մարքսիստների առաջին Համամիութենական կոնֆերանսում տրված իր զեկուցման եզրափակման խոսքում: Բայց այն ժամանակից ի վեր իրերի դրությունը քիչ է փոխվել, ստադիականության հարցերը դեռևս դուրս չեն եկել չդիֆերենցված ընդհանուր սխեմայի շրջանակից: Ափսոս, որ լեզվաբանները քիչ ցանկություն ունեն դբաղվելու այն հարցերով, որոնց մասին խոսել է Ն. Յա. Մառը, քիչ ցանկություն ունեն գլխավորապես այն պատճառով, որ այդտեղ կան բացառիկ դժվարություններ: Լեզվական նյութի հնէաբանական վերլուծությունը նույնպես մեծ հաջողություն չունի լեզվաբանների շրջանում և սեմանտիկայի այն հարցերով, որ սահմանիլ է հաբեթաբանությունը, ավելի շատ զբաղվում են նյութական կոլտուրայի հուշարձանների ուսումնասիրողները, որոնց աշխատանքի համար նոր ուղղություն են տալիս այն փաստերը, որ բացահայտել է Ն. Յա. Մառը լեզվական նյութի հիման վրա:

Վաղուց է, որ մինչև անգամ հնդեվրոպաբանության դերերի վրա կանգնած հնէաբաններն իրենց աշխատություններում երբեմն հանդում են այնպիսի եզրակացությունների, որոնք շատ են նման հաբեթաբանության մի քանի դրույթներին:

Վաղուց է, որ զանազան ժողովուրդների կոլտուրաներն ուսումնասիրող ազգաբաններն ու ազգագիրները կրոնի և երբեմն

¹ Н. Я. Марр, К вопросу об историческом процессе в освещении афетической теории, ИР, III, стр. 174.

շատ արխարիկ սովորութիւնների մեջ նկատել են իրենց համար անհասկանալի երևույթներ, որոնք իրենց բացատրութիւնն են գտնում, երբ հաշվի է առնվում հարեթաբանական սեմանտիկան:

Վաղուց է, որ լեզվաբանները սեմանտիկայի հարցերը լուծելիս դիմում են նյութական կոլտուրայի հուշարձաններին, բայց հնդեվրոպական լեզվաբանութեան այդ կապակցումը հնադիտութեան հետ արմատապես տարբեր է լեզվական և հնագիտական նյութի այն կոմպլեքսային ուսումնասիրութիւնից, որ կիրառում է հարեթաբանութիւնը:

1909 թվին Հեյդելբերգում սկսեց հրատարակվել «Բառեր և երկեր» („Vörter und Sachen“) հանդեսը, որի հրատարակիչների թվում կային ականավորագույն հնդեվրոպաբաններ, ինչպես օրինակ՝ Մերինգերը (R. Meringer) և Մուխը (R. Much): Հանդեսի առաջին պրակի առաջաբանում գրված է «Լեզվագիտական աշխատանքները հնչյունաբանական փոփոխութիւնների բնագավառով անհրաժեշտաբար սահմանափակելու ժամանակաշրջանից հետո, կարծեմ, հասել է ժամանակը ավելի մեծ ուշադրութիւն հատկացնելու բառերի, իրերի նշանակութեանը: Իր ասելով մենք հասկանում ենք ոչ միայն ծավալային առարկաները, այլ նաև մտքերը, պատկերացումները և այն ինստիտուտները, որոնք իրենց արտահայտութիւնն են գտել բառերի մեջ»: Եվ այնուհետև. «Մենք ենթադրում ենք, որ կոլտուրայի պատմութեան ապագան լեզվաբանութեան և նյութական կոլտուրայի պատմութեան միավորման մեջ է»:

Հանդեսում զետեղված էին շատ հոգւածներ, որոնք նվիրված էին արտադրութեան գործիքներին և առանձին առարկաներին, ընդ որում հանգամանորեն քննութեան է առնված նրանց տերմինաբանութիւնը և նյութն ընդգրկված էր արտասովոր լայն կերպով, սկսած խոր հնագաբից մինչև արդիականութիւնը: Այդպես են Մերինգերի հոգւածները սանդանման գործիքների, վառարանների և կավե անոթներից շինված կամարների մասին, այդպես է Լյուբեկի հոգւածը կալսիչի մասին: Դրանց զուգընթաց զետեղվում էին նաև հոգւածներ, որոնք ըստ թեմատիկայի ավելի նեղ բնույթ էին կրում, ինչպես օրինակ՝ Շպեյերերի աշխատութիւնները նավաշինական տերմինների մասին գերմաներեն լեզվում, գերմանական տավրդի և նրա հետ կապված գործիքների մասին: Աշխատութիւնների այդ նույն տիպի կարգը պետք է դասել Հոպսի աշխատութիւնը վաղ միջնադարի աղեղի մասին և Բոտեգլիոնեի

հանգամանակից հոգւածը, որ նվիրւած է Կարարյան քարհանքերից մարմար կտրելու և մշակելու վերաբերյալ տերմիններին:

Հանդեսի մի ամբողջ շարք հոգւածներ վերաբերում էին լեզվաբանական հարցերին, գլխավորապես ստուգաբանության հարցերին: Դրանց մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում Մերինգերի առանձին ակնարկները, որոնք միավորւած են "Sachlich-sachliche Probleme" ընդհանուր վերնագրով, ինչպես նաև Ուլաֆինի հոգւածի «ձեռք» և «գետ» տերմինների սեմանտիկական կապակցւածության մասին:

Հանդեսում տեղ են գտել նմանապես ազգագրության և կրոնի պատմության վերաբերյալ աշխատություններ, որոնցից հարկավոր է հիշատակել Մուխի «Մառը և մարդը» հոգւածը:

«Բառեր և իրեր» հանդեսը արևմտյան Նվրոպայի գիտական աշխարհում հաջողություն չունեցավ: Այդ հանդեսը «սոդիդ» ժուռնալի համբավ ձեռք չբերեց, և լեզվաբանները գերադասում էին իրենց աշխատությունները տպել հատուկ լեզվաբանական հանդեսներում, իսկ հնագետները՝ հնագիտականներում:

Արդեն իսկ հանդեսի 3-րդ հատորում, որը լույս տեսավ 1911 թվին, ղեկավարւած էր Մերինգերի հոգւածը «Մեր հանդեսի խնդրի և անվան մասին» վերնագրով, որտեղ պատասխաններ էին տրւում եղած քննադատությանը և գլխավորապես այն մեղադրանքին, թե հանդեսի անունը և նրա բովանդակությունը միմյանց չեն համապատասխանում:

Իր պատասխանում Մերինգերն ընդգծում էր, որ առաջաբանի յոթնվարացիան լեզվաբանության և նյութական կուլտուրայի պատմության միավորման մասին ուներ մի վերապահություն, որ այսպիսի միավորումը հանդիսանում է իդեալ և որ երկու գիտությունների արդի վիճակը հնարավորություն չի տալիս ցանկացած չափով կիրառելու այն: Մերինգերը մատնանշում էր, որ հանդեսը չի հրաժարւում զուտ լեզվաբանական և զուտ իրագիտական հոգւածներից և այդ տեսակ հոգւածներ նա կհրապարակի նաև այսուհետև:

Այս հանդեսի օրինակից, որն իսկապես ասած, նվիրւած էր սեմանտիկային, պարզորոշ կերպով երևում է լեզվագիտության այս բաժնի ըմբռնման զանազանությունը հնդեվրոպաբանների և հաբեթաբանների միջև, թեպետ պետք է նկատել, որ հանդեսի աշխատակիցները շոշափում էին շատ հարցեր, որոնք հնդեվրոպական լեզվաբաններն անտես էին առնում, գտնելով, որ դրանք

լեզվաբանության սահմաններից դուրս են գտնվում: Ինչպես տեսնում ենք արդեն իսկ հիշատակված հոգվածներից, լեզվի և նյութական կոլտուրայի կապը չէր դիտվում որպես մի միասնական անխզելի պրոցես, այլ որպես երկու ինքնուրույն պրոցեսներ, որոնց միատեղ ուսումնասիրությունը միայն օգնում է առանձին երևույթների բացատրմանը: Հանդեսում մենք չգտանք ոչ մի հոգված, որի մեջ քննվելիս լինեին սեմանտիկայի ընդհանուր հարցերը, նրա էությունը, օրենքները, նրա ուսումնասիրության մեթոդոլոգիական պահանջները: Այդ չկա, թեև ընդհանուր հարցերը, ինչպես են. «Ազգագրա-աշխարհագրության խնդիրներն ու ուղիները», «Լեզվագիտությունն ու իրավունքի ուսումնասիրությունը», «Սեքսուալ մոմենտների նշանակությունը լեզվի զարգացման մեջ» տեղ են գտել մեր քննության ենթակա հրատարակության էջերում: Այդ չկա, որովհետև ուսումնասիրողները չեն էլ ենթադրել, թե սեմանտիկայի զարգացման օրենքներն ընդհանուր են և՛ լեզվի մեջ և՛ նյութական կոլտուրայի հուշարձաններում:

Բայց անտարակույս նշանակալից հետաքրքրություն են ներկայացնում առանձին առարկաները և բազում դարերի ու հազարամյակների ընթացքում գործածված նրանց տերմինները հետազոտելու մեթոդոլոգիական դիրքավորումը, որը կապ ունի մարդկային կոլտուրայի զարգացման պրոցեսի անընդհատության թեզիսի հետ: Մարդկային աշխատանքի հենց այդ անընդհատությունն էր՝ սկսած պալեոլիտի ժամանակներից, որ առանձնապես ընդգրծում էր Ն. Յա. Մառն իր աշխատություններում, ջանի որ այդ անընդհատությունը, հետազոտության ճիշտ դրվածքի դեպքում, հնարավորություն կտա հայտաբերելու բառիս լայն իմաստով վերցրած մարդկային կոլտուրայի ստադիալ զարգացման աստիճանները:

„Wörter und Sachen“ հանդեսի աշխատողների լեզվաբանական հետազոտություններում անտարակույս բեղմնավոր արդյունքներ է տվել նրանց աշխատակցությունը ազդարարությունների և ազգագիրների հետ:

Պետք է նկատել, որ արևմտյան Եվրոպայի հումանիտար գիտությունների մեջ 19-րդ դարի երրորդ քառորդում հատուկ զարգացում էին ստացել ազգագիտությունն ու ազգագրությունը, շատ հնարավոր է շնորհիվ այն բանի, որ նրանք ուղղակի կապակցության մեջ էին գտնվում գաղութային քաղաքականության հետ, դրանով իսկ պրակտիկ խնդիրներ կատարելով: Համենայն դեպս

«Ժողովրդագիտությունը» անցյալ դարի 70-ական—80-ական թվականներին պրոգրեսիվ գիտություն էր:

Արևմտամետոպական ժողովրդագիտության (ազգագիտության և ազգագրության) հաջողությունները որոշվեցին գլխավորապես նրանով, որ այդ գիտությունն արագորեն աճեց, իր հետևում թողեց նյութերի կուտակման ստադիան և անցավ նրանց ընդհանրացման, դրանով իսկ օգնելով և իրեն հարակից հասարակագիտական գիտությունների զարգացմանը:

Համարյա ժողովրդագիտության զարգացման հետ միաժամանակ արագորեն աճեց ու ձևավորվեց մատերիալիստական պատմագիտությունը: 19-րդ դարի 60-ական—80-ական թվականների ժամանակաշրջանին են պատկանում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հիմնական աշխատությունները,— այն հեղինակների, որոնք ստեղծեցին պատմական մատերիալիզմը: Հասարակության վերաբերյալ գիտությունը դուրս եկավ լայն ճանապարհ, և միայն հատուկ գիտությունները, որոնք քննության են առնում հասարակության վերաբերյալ այդ մեծ գիտության առանձին բաժինները, շարունակում էին զարգանալ իրենց սեփական կեղևի մեջ, ենթադրելով, թե նրանք ունեն փռանձին, միայն իրենց հատուկ օրենքները: Արևմտամետոպական լեզվաբանությունն ու հնագիտությունն ընթանում էին նյութեր կուտակելու, նրանց տեխնիկական մշակման մեթոդի բարելավման ճանապարհով, հրաժարվելով զարգացման ընդհանուր հարցերից և ընդհանուր օրենքներից: Ուստի և լեզվի ու նյութական կուլտուրայի ծագումաբանության հարցերում տիրապետում էր նախալեզվի, նախահայրենիքի հնացած թեորիան, գաղթերի և լեզվի զարգացման պրոցեսում ու նյութական կուլտուրայի մեջ փոխառությունների վճռական դերի հնացած թեորիան: Ֆորմալ մեթոդը հանգեցնում էր մինչև իսկ այն բանին, որ այնպիսի մեծ հարցեր, ինչպես են մարդկային կուլտուրայի և լեզվի ծագման հարցերը, երբեմն համարում էին հնագիտության և լեզվաբանության մարզից դուրս, որով այդ երկու գիտությունները պարփակվեցին արհեստականորեն ստեղծված շրջանակների մեջ:

Հաբեթաբանությունը փշրեց այդ շրջանակները և իր ուսումնասիրության հիմք դարձրեց հատկապես լեզվի ծագման հարցը:

Հաբեթաբանությունը փշրեց այդ շրջանակները, իր ուսումնասիրության անկյունաքար դարձնելով լեզվի զարգացման, նրա պատմության ստադիաների փոխահաջորդման հարցերը:

Հաբեթաբանությունը փշրեց այդ շրջանակները և լեզվագի-

տական հարցերը սկսեց մշակել պատմական մատերիալիզմի ընդհանուր հունի մեջ, մոտենալով լեզվի ուսումնասիրությանը որպես պատմական պրոցեսի, որ որոշվում է հասարակության պատմությամբ:

Այդ տվեց բեղմնավոր արդյունքներ և առաջին պլանի վրա քաշեց սեմանտիկայի ու հնէաբանության հարցերը:

Չէ՞ որ հենց սեմանտիկան է հիմք հանդիսանում դատելու լեզվի զարգացման և նրա կապի մասին հասարակության հետ, ըստ որում սեմանտիկան շոշափում է և այնպիսի, թվում էր թե, շեղոք և ինքնուրույն մի բնագավառ, ինչպիսին է հնչյունաբանությունը, և լեզվի վերաբերյալ հաբեթաբանական ուսմունքի մի հատուկ բաժինն է կազմում սեմանտիկական հնչյունաբանությունը:

Ն. Յա. Մառը հստակ կերպով հետևյալ բառերով է որոշել սեմանտիկական ուսումնասիրության խնդիրները. «Մենք ցանկանում ենք բացահայտել և բացահայտում ենք սոցիալական երեվոյթները բառերի «արմատի» մեջ, հատկապես նրանց նշանակության մեջ, ինչպես այդ պահանջում է պատմությունը»:¹ Ն. Յա. Մառն իսկապիս որ լեզվական հետազոտություններին մոտեցավ որպես պատմաբան, ուստի և զարմանալի չէ, որ հնդեվրոպաբան լեզվաբանները նրան համարում էին խորթ մարդ, մի պատմաբան-հնագետ, որ ներխուժել է նրանց բնագավառը:

Հաբեթաբանական սեմանտիկայի ըմբռնումը Ն. Յա. Մառն արտահայտել է հետևյալ կերպ. «Հաբեթական լեզվագիտության առանձին ուժը կազմում է սեմանտիկան, բառերի նշանակության վերաբերյալ ուսմունքը: Հնդեվրոպական սեմանտիկան հիմնված է առօրյա, երբեմն պատմական բնույթի բացատրությունների վրա, որոնք կատարվում են տրամաբանական վերացական կապերի սահմաններում: Հաբեթական լեզվաբանությունը բացահայտել է, որ սեմանտիկան, ինչպես և լեզվի ձևաբանությունը բխում է մարդկության հասարակական կարգերից, նրա տնտեսա-էկոնոմիկորեն դասավորված սոցիալական պայմաններից, որոնք հաճախ ընդհանուր ոչինչ չունեն ոչ մեր վերացական թեորետիկ կառուցումների հետ, որ հիմնականում դուրս են գալիս օդային ամրոցների, ոչ էլ մեր նյութական ընկալումների հետ, որոնք անախրոնի-

¹ Н. Я. Марр, К вопросу об историческом процессе в освещении яфетической теории, Изб., раб., т. III, стр. 175.

կաբար փոխադրվում են նախապատմական մարդու հասարակական մտածողության վրա»¹

Սեմանտիկան արտացոլում է հասկացության պատմական զարգացումը և հաճախ ածանցյալ տերմինն իր էությունը ընդհանուր քիչ բան է ունենալու իր նախատիպի հետ: Այս տեսակետից պարզորոշ օրինակներ է տալիս ֆունկցիոնալ սեմանտիկան, որտեղ «ձին» որպես փոխադրամիջոց իր տերմինով առնչվելու է «եղջերուի» կամ «շան» — այդ հնագույն փոխադրամիջոցների հետ, իսկ «հացը» — «խոզակաղինի» հետ, որը մարդկային զարգացման վաղնջական աստիճանների ժամանակ մի քանի տեղերում ծառայել է որպես հիմնական կերակուր:

Եվ միթե՞ ն. Յա. Մառի այս մոտեցումը չի ներդաշնակվում Վ. Ի. Լենինի դրույթների հետ, որը պահանջում է ամեն մի պատմական երևույթ ուսումնասիրելիս ընդհանալ հիմնական պատմական կապը, յուրաքանչյուր հարցին նայել այն տեսակետից, որ թե ինչպես է որոշ երևույթ պատմության մեջ ծագել, իր զարգացման ընթացքում ինչպիսի գլխավոր էտապներ է անցել այդ երևույթը և նրա զարգացման տեսակետից նայել, թե տվյալ բանը ինչ է դարձել այժմ»²

Եվ հաբեթական թեորիան պնդում է, որ մարդկային լեզուն իր զարգացման վաղ աստիճանի ժամանակ որակապես այլ է եղել, քան ժամանակակից մարդու լեզուն և ծառայել է ոչ թե իբրև անհատական, այլ իբրև կոլեկտիվ շփման միջոց:

Նմանապես և հին մարդկային լեզվի տեխնիկական արտահայտությունը էականապես զանազանվել է ժամանակակից արտահայտություններից:

Հաբեթական լեզվագիտությունը ցույց է տվել, որ հոգորոշ հնչյունային լեզուն լեզվի սկզբնական տեսակը չի եղել: Լեզուն իր զարգացման առաջին էտապում արտահայտվել է դիֆուզայնորեն, կոմպլեքսային անհոգորոշ ճիշի ձևով, մնջախաղով, ժեստով և պրիմիտիվ գրաֆիկայով:

Հաբեթական լեզվագիտությունը նմանապես ցույց է տվել, որ ավելի ուշ, երբ հոգորոշ հնչյունային լեզուն զատորոշվեց և դարձավ լեզվի հիմնական ձև, լեզվի մյուս տեսակները՝ գծագրական

¹ Н. Я. Марр, Об яфетической теории (1924), Изб. раб., т. III, стр. 31—32.

² Լ. Ե. Ն. Ն., Պետության մասին, Ընտիր երկեր, IV հատ., 1935 թիվ, էջ 338:

ու ժեստերի լեզուն, շարունակեցին իրենց ինքնուրույն գոյությունը, թեպետև զարգանում էին նույն այն օրենքներով, ինչ և հընչյունային լեզուն:

Գրության պատմության ուսումնասիրությունն ակնառու կերպով դրսևորում է այն փաստը, որ պիկտոգրաֆիկ գրությունը սկզբնապես և շատ երկար ժամանակ հանդիսանում էր որպես գրաֆիկ լեզվի մի ինքնուրույն տեսակ, որ զարգանում էր հնչյունային լեզվին զուգընթաց և միայն ավելի ուշ ժամանակներում դիրն սկսեց կատարել ծառայական դեր, որը ենթարկվում էր հընչյունային լեզվին:

Գրության պատմությունն ակնառու կերպով ցույց է տալիս պիկտոգրաֆիկ գրության աստիճանական հնչյունավորման այդ պրոցեսը՝ պիկտոգրամների հաջորդական բացահայտմամբ, սկզբում սիլլաբիկ, ապա ֆոնեմային նշաններով, և պիկտոգրամների վերածվելը դետերմինատիվների: Այս բոլորը շատ պարզորոշ կերպով դրսևորում են հին Եգիպտոսի և Չինաստանի գաղափարագրերը, ինչպես նաև Առաջավոր Ասիայի սեպագրերը՝ սկսած նախաշումերական զուտ պիկտոգրաֆիական գրերից և վերջացրած աքեմենյան սեպագրերով:

Գաղափարագրության պիկտոգրամները միանգամայն անգնահատելի նյութ են սեմանտիկայի ուսումնասիրության համար, քանի որ այս դեպքում սեմանտիկական կապակցությունը որոշվում է ոչ թե հնչյունային համապատասխանությունների հիման վրա, այլ ըստ ակնառու պիկտոգրամների:

Հին Եգիպտոսի գաղափարագրերը, որոնք պիկտոգրաֆականությունը պահպանել են իրենց գոյության ամբողջ տևողության ընթացքում, պատկերավոր ձևով դրսևորում են սեմանտիկայի օրենքները, որոնց բնորոշումը տվել է հաբեթական լեզվագիտությունը:

Հաբեթաբանության հիմնական դրույթն այն մասին, որ սեմանտիկական որոշում է սոցիալ-էկոնոմիական կյանքը, իլլուստրացվում է «ականավորություն», «ազնվություն» նշանակող գաղափարագրով: Գաղափարագրերը ներկայացնում է մի այժ, որի պարանոցի վրա կա սեփականության կնիք, այսինքն սեփականության խարան: Միթե սա մի ապշեցուցիչ իլլուստրացիա չէ այն դրույթի համար, որ հին Արևելքում անասունների մասնավոր սեփականությունը դասակարգային շերտավորման հիմնական տարրն էր և որ անասնապահության աճմամբ տեղի էր ունենում հասարակության

աստիճանական կուտակում առանձին ցեղերի և տոհմերի ձեռքում:

Պակաս ցուցանշական չէ և հին եգիպտական գերի (նկ. 2) տերմինը, որը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը skt բայն է, որ նշանակում է «սպանել», որի դետերմինանտն է գավազանը, հենց այնպիսի մի մկունդ, որպիսին մենք հաճախ ենք տեսնում թշնամուռ սպանող թագավոր պատկերող (նկ. 1) եգիպտական ռելիֆների վրա: Բառի երկրորդ մասը՝ ռմ նշանակում է «կյանք» և, վերջապես, երրորդը, որ այդ իսկ բաղկացական բառի դետերմինատիվն է, պատկերում է գերուն, որի ձեռքերը կապած են հետևում: Այսպիսով այդ տերմինը կարելի է թարգմանել «կենդանի-սպանված»: Այդ ակնառու կերպով իլլուստրացնում է հասարակության զարգացման այն ստադիան, երբ ռազմագերիները, որոնց առաջ սպանում էին, սկսեցին օգտագործվել տնտեսության մեջ, և նրանց կյանքը, պահպանվում էր:



② 𓂏 𓂐 𓂑 𓂒 𓂓 𓂔

③ 𓂕 𓂖 ④ 𓂗 𓂘 𓂙 𓂚

⑤ 𓂛 𓂜 𓂝 𓂞 𓂟 𓂠 𓂡 𓂢

⑥ 𓂣 𓂤 𓂥 𓂦 𓂧 𓂨

⑦ 𓂩 𓂪 𓂫 𓂬 𓂭 𓂮

Եթե մենք վերցնենք «հոգու» հին եգիպտական պատկերացումը և նրա պիկտոգրաֆիկ արտահայտությունները՝ «թուլուն», «եզ», «խոյ», «մարդագլուխ թուլուն» և, վերջապես, «մարդ», կտեսնենք, որ դրանք կապված են տարբեր տնտեսական ստադիաների հետ: Մեր առջևն է կերպարի զարգացման ակնառու պատմությունը: Թուլակերպ հոգին բնորոշ է որսորդական կրոնի համար, ցլակերպ և խոյակերպ հոգին՝ հողագործական, անասնապահական կրոնի համար, իսկ երկու վերջին գաղափարագրերը՝ մարդագլուխ թուլունը և մարդու կերպարանքը ցույց են տալիս կերպարի աստիճանական մարդանմանացումը:

Հին-եգիպտական շատ աստվածություններ, կենդանիների պաշտամունքի հետ կապված լինելով, պատկերացվում էին կամ

որպես կենդանի կամ թե որպես կենդանազուլս մարդ: Իսիդա և Գատոր աստվածուհիները, որոնք սկզբնապես ունեին կովի կերպարանք, իրենց անտրոպոմորֆիզացիայից հետո պահպանեցին միայն կովի եղջյուրները, այն էլ որպես գլխասարքի ատրիբուտ: Եգիպտական շատ աստվածներ կապված էին նաև ծառի հետ, որի պաշտամունքին հանդիպում ենք հնագույն դարաշրջաններից: Մառերի ամելի ուշ ժամանակների աստվածություններին սկսել են պատկերել ծառից ինոդ կանանց ձևով, այսպիսով այստեղ տեղի է ունեցել կերպարի փեղկարկում: Միայն նախկին որսորդական աստվածությունների հողագործականի վերածվելով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ որպես դաշտի աստվածներից մեկը հին եգիպտական կրոնի մեջ հանդես է գալիս մի աստվածություն՝ երկգուլիս առյուծի կերպարանքով:

Հին Եգիպտոսի կրոնը պատկերավոր կերպով է արտացոլում և այնպիսի մի խոշոր հասարակական տեղաշարժ, ինչպիսին է մայրիշխանությունից հայրիշխանության անցնելը: Նյութն ուշադիր կերպով քննության առնելու դեպքում կարելի է համոզվել, որ ամենաժողովրդական աստվածներից մեկը՝ Օսիրիսը, սկզբնապես եղել է կին աստվածություն: Այս բանն է մատնանշում նրա սերտ կապը ջրի, ծառի և ծառերի կին աստվածուհիների հետ, ինչպես նաև առասպելի այն պատմությունը, թե այն բանից հետո, երբ Սետը սպանեց Օսիրիսին և նրա մարմինը կտրատելով՝ մարմնի անդամները ցրիվ տվեց ողջ երկրով մեկ, չգտնվեց այդ աստծու միմիայն առնանդամը: Նեղոս գետի աստվածություն Խապին էլ հանդես է գալիս և պատկերվում որպես երկսեռ, հերմաֆրոդիտ աստվածություն: Եգիպտական լեզվի հնչաբանական ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեին գաղափարաբեր դետերմինատիվները, որոնք դրվում էին բառերի վերջում և կատարում էին պարզաբանիչների ծառայական դեր: Բայց այդ դետերմինատիվները հին պիկտոգրաֆիկ գրության մնացորդներն են և միայն պիկտոգրամների հնչյունաբանական բացահայտումից հետո, հիերոգլիֆների երկարատև զարգացումից հետո նրանք պահեցին ծառայական դերը: Բայց այդ դերում ևս նրանք մեզ համար հանդիսանում են միանգամայն անընահատելի մի աղբյուր՝ գրաֆիկ կերպով իլուստրացնելով միանման հնչող բառերի սեմանտիկական կապվածությունը: Եթե kd «կառուցել» բայը որպես դետերմինատիվ ունի բրուտի անիվի վրա անոթ պատրաստող մարդը, ապա միթե՞ անվիճելի չէ այդ տերմինի

կապը մեկ ուրիշ կձ «ծնփել» բայի հետ: Եթե «արևելք» տերմինը դետերմինացվում է ծննդաբերող կնոջ պատկերով, ապա մենք է՛լ ավելի հստակորեն կարող ենք իլուստրացնել արևի ծագման և ծննդյան կապի պատկերացումը: Եվ եթե հին եգիպտեցիների շատ նախդիրներ կապված են մարմնի զանազան մասերի պատկերի հետ, ապա մի՞թե այդ փաստերը կատարելապես բացառիկ նյութ չեն նախդիրների ծագման հարցի ուսումնասիրության համար:

Այս բոլորը մատնանշում է այն, որ հին եգիպտական գրությունը լայն ասպարեզ է տալիս լեզվի հնէաբանական վերլուծության համար և նրա մեջ շատ հստակ կերպով արտացոլվում են այն կապերը ու փոփոխությունները, որ հավաստել է հաբեթաբանությունը հնչյունային համապատասխանությունների նյութի հիման վրա:

Սեմանտիկայի վերաբերյալ ուսմունքի մեջ հաբեթաբանությունը դանազանում է հետևյալ հասկացություններ. սեմանտիկական շարք, սեմանտիկական փունջ և սեմանտիկական նշանակությունների բույն:

Սեմանտիկական շարք ասելով հասկանում ենք բառերի մի քանի նշանակությունը, բառեր, որոնք միմյանցից կախում ունեն և կապված են իրար հետ նրանով, որ մի նշանակություն բխում է մյուսից: Այսպես, օրինակ, հին եգիպտական իձ տերմինը նշանակում է «քար»—«մետաղ»—«պղինձ»: Մեր առջև է ֆունկցիոնալ սեմանտիկական զարգացման մի շարք: Սկզբում արտադրության մեջ գործ է էին ածվում քարե գործիքներ, ապա քարին որպես նյութ փոխարինեց պղինձը, որը արտադրության մեջ գործածվող մետաղներից առաջինն էր, ըստ որում այդ տերմինը նշանակում էր ընդհանրապես մետաղ և միայն հետո, արտադրության հետագա բարձրացման ժամանակ, երբ սկսեցին գործածել զանազան մետաղներ, այդ տերմինը ստացավ «պղինձ» ճշգրտված նշանակությունը: «Քարի» և «մետաղի» սեմանտիկական կապը նկատվում է մի քանի հին եգիպտական տերմիններում: Այսպես, օրինակ, 3— 1 տերմինը (նկ. 2) միացնում է իր մեջ և՛ թանկագին քարերը, և՛ մետաղները, իսկ 4ճ տերմինը դանակ դետերմինատիվով, ըստ որում «դանակն» առնվում է «մետաղե դանակ» իմաստով, ածանցված է 4ճ «կայծաքար» տերմինից, որ դետերմինացված է քարով (նկ. 4): Իսկ հնագիտական նյութը ցույց է տալիս մեզ, որ հնագույն եգիպտական պղնձե դանակները վերարտադրում էին

քարե դանակների ձևը, որոնք լայնորեն տարածված էին նգիպտոսի մինչ դինաստիական կուլտուրայի ժամանակ:

Հին եգիպտեբենն, այսպիսով, պահպանել է միայն մի մասը «ձեռք»—«ծառ»—«քար»—«մետաղ» սեմանտիկական շարքի, որ հավաստել է Ն. Յա. Մառը հարեթական լեզուների նյութի հիման վրա:¹

Նգիպտական գաղափարագրության մեջ նկատվում է սեմանտիկական մյուս շարքն էս. «մի լուծ եզ»—«մի լուծ ձի»—«ձի»: Այսպես, օրինակ, Խ+Դ տերմինը, ինչպես երևում է դետերմինատիվներից, սկզբնապես նշանակում էր՝ գութան լծած մեկ լուծ եզ, ապա՝ կառք լծած մի զույգ ձի և, վերջապես, այդ նույն արմատն ունեցող դպտեբեն բառը նշանակում էր պարզապես «ձի»: Այստեղ տերմինը մեկ կենդանուց անցնում էր մյուսին ըստ քաշող ուժի ֆունկցիայի:

Ն. Յա. Մառը մեծ նյութի հիման վրա ցույց տվեց «շուն», «եղջերու», «ձի», «ուղտ» տերմինների կապակցությունը, հավաստելով, «բոլոր թվարկված փոխադրական կենդանիների անունները միևնույնն են, ըստ անվանակոչվողների ֆունկցիաների նույնականության՝ անունը վաղ ժամանակի փոխադրական կենդանիներից անցնում է հետագույն ժամանակի կենդանիների»...² Այսպիսի վերապրուկներ արդեն վաղուց էին նկատվել պաշտամունքի և կրոնական պատկերացումների մեջ:

Սլավոնացիների մոտ թաղման ծեսում սահնակը փոխարինում էր անիվավոր սալակին, իսկ սկյութացիների մոտ թաղման ժամանակ երբեմն գործ էր ածվում եղջերուն կամ ձին՝ եղջերուի դիմակով, ինչպես այդ բանը բացահայտել են ուշ շրջանի սկյութական շիրմաթմբի (կուրգան) պեղումներն Ալթայի վրա:

Հին եգիպտական կրոնական պատկերացումներում, որոնք արտացոլվել են ինչպես գրության մեջ, այնպես էլ կերպարար հուշարձաններում, հստակորեն դրսևորվում է հետևյալ սեմանտիկական շարքը՝ «ջուր»—«ծառ»—«կին»,— կապակցված կենսատուտարրերի մի շարք: Նգիպտական նկարներում սրբազան ծառի նկարից հաճախ ընձուղվում է անոթ բռնած մի ձեռք, ըստ որում

¹ Н. Я. Марр, Средства передвижения, орудия самозащиты и производства в доистории (1926). Избр. роб., т. III, стр. 149. Նույնը—Постановки учения об языке в мировом масштабе и абхазский язык (1928), стр. 34—35.

² Ibid, стр. 140.

անոթից ջուր է թափվում, իսկ արքայական դամբարաններից մեկում նկարված է կնոջ ստինքներով ծառ, որ կերակրում է թագավորին: Եվ այդ օրինակները պատկերավոր կերպով իլլուստրացնում են սեմանտիկական կապերը, որոնք Ն. Յա. Մառը բացահայտել է լեզվական նյութի հիման վրա:²

Սեմանտիկական շարքի տարրերը, որոնք կապված են առաջին տարրի հետ և կախում ունեն նրանից, կոչվում են նրա սեմանտիկական դերիվատներ (ածանցյալներ): Այսպես, օրինակ, վերոբերյալ օրինակներում «քար» տերմինի սեմանտիկական դերիվատներ են հանդիսանում և՛ «դանակ» տերմինը, և՛ «մետաղ», և՛ «պղինձ» տերմինները:

Բայց միևնույն տարրը կարող է տեղ գրավել տարբեր սեմանտիկական շարքերում, այսինքն՝ հանդես գալ տարբեր սեմանտիկական ասպեկտներով:

Այսպես, օրինակ, մեր քննության առած *ble* տերմինը «մետաղ», «պղինձ» նշանակությամբ բացի տեխնոլոգիական սեմանտիկական ասպեկտից, որը նրան կապում է «քար» տերմինի հետ, ունի նաև պաշտամունքային կրոնական ասպեկտ: Հին եգիպտական դրոշմյան մեջ *ble* բառը՝ այդ նույն գրաֆիկական գծագրությամբ նշանակում է և՛ «մետաղ» և՛ «երկինք», այսպիսով կազմելով սեմանտիկական մի նոր շարք՝ «քար»—«մետաղ»—«երկինք», որը նույնպես լիակշռված կերպով հաստատում է հաբեթական լեզուների հնէաբանական վերլուծության տվյալների ճշտությունը:³

Մետաղի երևան գալը մինչ դինաստիական եգիպտոսում ազդանշանում է փոփոխությունների գոյությունը այն դարաշրջանի տնտեսական կյանքում, իսկ վերնաշենքային աշխարհում, պաշտամունքի մեջ և կրոնական պատկերացումներում՝ բնազանցական տարրերի ուժեղացումը, ընդ որում հին թագավորության ժամանակ ցայտուն է դառնում այնպես լայնորեն զարգացած արևի պաշտամունքը: Այդ պատճառով մետաղի սեմանտիկական ևս, որոշ պաշտամունքային ասպեկտով վերցրած, հակվում է դեպի բնազանցական տարրերը, որը հստակ կերպով երևան է գալիս հաբեթական լեզուներում, որոնց մեջ մետաղների տերմինները կապված են երկնքի և երկնային լուսատուների տերմինների հետ:

¹ Н. Я. Марр, Иштарь (1927), Избр. раб., т. III, стр. 317.

² Н. Я. Марр, Яфетические элементы в языках Армении, I, Изб. Ак. Наук. 1911, № 137: *նույնի*—Скифский язык (1926), Изб. раб., т. V, стр. 201—202: *նույնի*—Об яфетической теории (1924), Изб. раб., т. III, стр. 16.

Հին եգիպտական կրոնական տեքստերում երկինքը հաճախ է հանդես գալիս որպես մետաղյա. այս պատկերացման հետ սերտորեն կապված էր նաև «երկաթի» բաղկացական տերմինը, որը բառացի նշանակում է «երկնքի մետաղ» և որն այժմ մենք հիմք չունենք թարգմանելու «ասուպային երկաթ»:

«Երկինք» տերմինի ինքնուրույն սեմանտիկական դերիվատներն հանդիսանում թե՛ գծագրությամբ, թե՛ հնչյունաբանությամբ, նրան համընկնող «հրաշք», «հեռանալ» բառերը:

Այսպիսով հին եգիպտերեն լեզվում մենք տեսնում ենք մի շարք տերմիններ, որոնք ածանցված են *bia* հիմքից և կազմում են մի տարրով միմյանց հետ կապված երկու սեմանտիկական շարք:

‘Գար’ → ‘մետաղ’ → ‘պղինձ’

‘հրաշք’ ← ‘երկինք’ → ‘հեռանալ’

Փոխադարձաբար միմյանց հետ կապված այս երկու սեմանտիկական շարքերը, որոնք հատկորոշվում են տարբեր սեմանտիկական ասպեկտներով, կազմում են մի սեմանտիկական փունջ:

Սեմանտիկական այս բարդ փունջը, որի մեջ տարբեր շարքերի առանձին տարրերը կապված են միմյանց հետ, կոչվում են սեմանտիկական նշանակութայունների բույն: Այս տեսակետից շատ բնորոշ է «արևի» և նրա սեմանտիկական դերիվատների սեմանտիկան, որը նկատվում է հին եգիպտական լեզվում, նրա գրության մեջ, կերպարար հուշարձանների վրա և կրոնական պատկերացումների մեջ:

Եգիպտական կրոնի մեջ արևը տոտեմիզմի գծով ներկայացված է կենդանիների զանազան կերպարներով: Արևի աստվածությունը իր բազմաթիվ անձնավորումներով հանդես է գալիս որպես առյուծ, խոյ, թռչուն, բզեզ, օձ: Պատկերագրության բնագավառում այդ տարրերը երբեմն միասին են լինում: Հայտնի է արևի մի նկար, որը պատկերված է հետևյալ կերպ. արևի սովորական սկավառակի փոխարեն տրված է սկարաբեուս բզեզը, որ ունի խոյի գլուխ և թռչունի տարածած թևեր: Իսկ սովորաբար «թևավոր արևը», արևի աստվածության ամբողջ Հին Արևելքում տարածված սիմվոլը, սկավառակի կողքերին ունի երկու օձի կերպարանք: Արևի հին եգիպտական կրոնական կերպարների մեջ պատահում են կամ աստվածների մասնակիորեն մարդակերպացած ֆիգուրաներ կամ մարդկային կերպարանքով հանդես եկող աստվածներ:

Մեծ թվով սեմանտիկական դերիվատներ (ածանցյալներ) ունի

արևածագը: Այստեղ հին եգիպտական նյութը հստակորեն դրսև-
վորում է «արև»—«կյանք» սեմանտիկական կապերը:

Վերջենք երկու միանման տերմին. ե՞ս «առավոտ»— արևի
սկավառակի՝ երկրի դետերմինատիվով և ե՞ս «հղի լինել», որն
իրեն դետերմինատիվ ունի նստած կնոջ կերպար: Ուհր արմատը
տարբեր դետերմինատիվներով նշանակում է «առավոտ»—«հղիա-
նալ»—«կյանք»:

Է՛լ ավելի պարզորոշ պատկեր է տալիս ես արմատը, որը
գրութչյան ժամանակ «սար» դետերմինատիվով նշանակում է «վեր
ելնել», «արևի սկավառակ» դետերմինատիվով՝ «լույս տալ», իսկ
«ծննդաբերող կին» դետերմինատիվով՝ «ծնել»:

Այդ նույն տերմինը երկու դետերմինատիվով՝ «ծննդաբերող
կին» և «սար» նշանակում է «կառուցվածքի արևելյան կողմ»,
գրանով իսկ դրսևորելով ամենասերտ կապն արևի ծագման և
ծննդի միջև (նկ. 5):

Այն պատկերացումը, թե մարդիկ արևի զավակներ են, պար-
զորոշ կերպով պահպանվել է կրոնական տեքստերի «մարդիկ»
տերմինի մեջ (նկ. 6), ըստ որում հին տեքստերում այդ տերմինի
դետերմինատիվ է հանդիսանում արևի սկավառակը՝ ընձյուղավոր
ճառագայթներով:

Արևը որպես կյանք տվող հանդես է գալիս ոչ միայն լեզվա-
կան նյութերի մեջ, այլև կերպարար հուշարձանների վրա և կրո-
նական գրականության մեջ:

«Արեգակնային աստվածը ինքն իրեն բեղմնավորեց»,—
պատմում է աշխարհի ստեղծագործության վերաբերյալ իլիտադո-
լյան առասպելը:

Ամենքոտեպ 4-րդի ժամանակվա մի հիմն հետևյալ արտահայ-
տություններով է փառաբանում արևին. «Գեղեցիկ է քո ծագումը
հորիզոնի վրա, ո՛ր, կենդանի Աթոն, կյանքի սկզբնավորիչ... դու
հորինում ես մարդկային սաղմը կնոջ մեջ, դու ստեղծում ես սեր-
մը տղամարդու մեջ, դու որդուն կյանք ես տալիս մոր մարմնի
մեջ... դու շունչ ես տալիս ամեն մի արարած կենդանացնելու հա-
մար... ո՛ր, ցերեկվա արև, ամեն մի հեռավոր երկրի սարսափ, դու
ես ստեղծել մարդկանց կյանքը... աշխարհը քո ձեռքում այնպես,
ինչպես դու ստեղծել ես նրանց (այսինքն՝ մարդկանց): Երբ դու
ծագում ես, նրանք ապրում են, երբ դու մայր ես մտնում, նրանք
մեռնում են»:

Բայց մինչև Ամենքոտեպ 4-րդն էլ, դեռևս հին թագավորու-

թյան դարաշրջանում մենք գտնում ենք այդ նույն պատկերացումները, որոնց սկզբնավորությունը հասնում է խոր հնություն: Իսկ կերպարար հուշարձանները մեզ տալիս են արևի սկավառակը զարդարված գաղափարագրերով, որոնք նշանակում են «կյանք»:

«Արևի» սեմանտիկական կապը «կյանքի» հետ հաբեթաբանությունը հավաստել է հսկայական լեզվական նյութի հիման վրա, բայց ես դրա վրա կանգ չեմ առնի¹:

Կոսմիկական աչքերի՝ արևի և լուսնի պատկերացումը, որ շատ պարզորոշ կերպով հանդես է գալիս լեզվական նյութերի հնէաբանական ուսումնասիրության ժամանակ, նույնպես հստակ կերպով իլուստրացվում է հին եգիպտական գաղափարագրերով²:

Տեքստից մեկը արևային աստծու մասին ասում է հետևյալը.

«Աջ աչքը՝ արևի սկավառակն է, ձախ աչքը՝ լուսինը»:

Էլ-Կարի օազիսի հիմներում մենք կարդում ենք. «Նա հենց այն է, ում տեսնում են նրա փայլուն աչքերի մեջ... և նրա երկու աչքն էլ լույս են տալիս»... Նվ այնուհետև. «Նրա ձախ աչքը, որ տիրում են բոլոր մարդիկ, լուսին է»: Նման օրինակները անթիվ են եգիպտական տեքստերում՝ սկսած հնագրային թագավորությունից մինչև հռոմեական էպոխան:

Լեզվական նյութը միայն լրացնում են այդ տվյալները: Այսպես, օրինակ, «արև» բառի փոխարեն գործ է ածվում նմանապես «աջ աչք» կամ «արևմտյան աչք» տերմինը, իսկ «լուսնի» փոխարեն՝ «ձախ աչք», «արևելյան աչք» տերմինը:

Գաղափարագրերը պահպանել են «արև աչքի» պատկերացումը նաև «արևելք», «արևի ծագման վայր» տերմինի մեջ (նկ. 7), որն օժտված է աչքի և սարի դետերմինատիվներով:

Եգիպտական համայնիների մեջ հաճախ են պատահում ինչպես աջ, այնպես էլ ձախ աչքի ձևով համայնիներ, որոնք ըստ հավատալիքների ունեն հատուկ պաշտպանական զորություններ և հանդիսանում են ամենայն հավանականությամբ «արևի» և «լուսնի» պատկերը:

Այստեղ մենք գտնում ենք հետևյալ սեմանտիկական շարքը՝ «աչք»—«արև»—«կյանք»—«առողջություն»—«բարօրություն»:

¹ Н. Я. Марр. Яфетические зори на украинском хуторе (1930), Изб. раб. т. V, стр. 224. Նույնի—Отчет о лингвистической поездке к волкамским народам, Изб. раб., т. V, стр. 375.

² Н. Я. Марр. Китайские языки и палеонтология речи: «глаза» космические «солнце» и «луна». Доклады АН. Наук, 1926, стр. 94.

Արևի սեմանտիկական դերիվատներն առանձնապես բազմաթիվ են: Հին եգիպտական լեզվի, ինչպես և շատ ուրիշ լեզուների մեջ, արևի հետ կապված են նաև ռսն «ոսկի» մետաղի տերմինը այլ սեմանտիկական ասպեկտով, որը տալիս է այն երկրի անունը, որտեղից նգիպտոսը ոսկի էր ստանում:

Արևի հետ կապված են նաև «ժամանակ», «ժամ» տերմինները, իսկ «արևի լույսի» հետ՝ «զեղեցկություն», «փայլ», «սպիտակ» տերմինները:

Սեմանտիկական տեխնիկական ասպեկտով «արև» բառը կապված է «կրակ», «այրվածք» բառերի հետ: Այս բոլոր բառերը տալիս են «արևի» հետ նույնը հանդիսացող արմատական գաղափարագրերը, որոնք, սակայն, ունեն տարբեր դետերմինատիվներ:

Այսպիսով հին եգիպտական նյութը բացահայտում է «արևի» հսկայական թիվ սեմանտիկական բերիվատներ, որոնք կազմում են միմյանց հետ հյուսված նշանակությունների մի ամբողջ բույն:

Հիերոգլիֆային գրությունամբ նշվող այս բոլոր սեմանտիկական կապերն իրենց լրիվ համապատասխանությունն են գտնում կիրպարվեստի, ինչպես նաև բանաստեղծության ու կրոնական գրականության մեջ:

Այս հոգվածում ես կարող էի մեջ բերել միայն փոքրաքանակ նյութ, սակայն այս ևս, ինչպես ինձ թվում է, լիակատար պարզորոշությամբ դրսևորում է այն մեծ նշանակությունը, որ ներկայացնում է հաբեթաբանական սեմանտիկական աշխատանքի համար հին եգիպտոսի պիկտոգրաֆիական գրությունը մինչևիսկ եթե վերցնենք միայն բառամթերքը, որով ես սահմանափակել եմ իմ հոգվածը:

Հին եգիպտոսի գաղափարագրությունը պահել էր իր մեջ, ինչպես տեսնում ենք, շատ տարբեր, որոնք հանդիսանում են անցյալ ստադիաների վերապրուկները և առանց հատուկ դժվարության կարող են բացահայտվել գաղափարագրերի հնչաբանությունական ուսումնասիրությամբ:

Այդ գաղափարագրությունը կատարելապես բացառիկ մի նյութ է հին եգիպտոսի զարգացման և բազիսի ու վերնաշենքային ներուժների ուսումնասիրության համար, քանի որ լեզվի սեմանտիկական արտահայտվում է պիկտոգրամներում, որն զգալիորեն հեշտացնում է հետազոտական աշխատանքը:

Նվ վերջապես հին եգիպտոսի գաղափարագրությունը փայ-

լուն կերպով իլուստրացնում է հաբեթական լեզվագիտության դը-
րույթները սեմանտիկայի մասին, որոնք սահմանվել են հսկայա-
կան լեզվական նյութի ուսումնասիրման հիման վրա, ըստ որում
այդ դրույթներն իլուստրացնում է պատկերավոր, գրաֆիկ ձևով և
դրանով իսկ դրանք դարձնում է անվիճելի:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220034522

204}

1864 2 B.

A ^{II}
34522



ЦЕНА

A $\frac{11}{34522}$